

սխալման, մենք պարտաւոր ենք ստորել այն շեղումն որով մեր նախնեաց փառաւոր անցեալն է մեզ հետ խօսում և նոցա հետեւել զորում։ Սիրենք այդ շեղումն, սիրենք և ցանկանանք միշտ աչքի առաջ ունենալ այն Աստուածաշունչը, որ մեր Աստուծոյ պատգամներն է մեզ ուսուցանում մեր հայրերի շեղումով։



ՀԱՐԱՆՅ ՉԱՅՆՆԻՐ:

Հօօֆս պատուական ուսուցչական առաջարկում է՝ այս վերնագրի ներքոյ այս ընծայել պարբերաբար Christliche Welt-ի մէջ գեղեցիկ հատուածներ ևւ ասացուածներ հին մասցուած հեղինակների երկասիրութիւններից, ի նկատի ունենալով՝ որ «շատ հին» կայ աւելի գնահատելի քան մեր այսօր, յաջող դէպքերում, արտադրած արծաթըն ու պղինձը։ Եւ իբրեւ առաջին օրինակ մէջ է ընելում ինքը մեր դարու սկիզբներին (1815 թ-ին) վախճանած, իւր մարտը թարնալաշտութեամբ յայտնի, մի գերմանացի մատենագրի՝ Մաթիաս Կլապիտեի, հետեւեալ տողերը։

Ա. ԻՐ ՄԻ ԲԱՐԵՈՒՄԻՆ ՈՒՂԱՆՆ ԴԱՐՄԱՐԻՐ:

Մարդս կարող է ճշմարտութիւնը չճանաչել, արհամարհել կամ ծնել, սակայն որչափ և ծուռ լինի ու սխալ նորա ընթացքը՝ մոլորուած է նա, միայն, և իւր այսպիսի ընթացքի մէջ կրկին ճշմարտութիւն է որոնում և ճշմարտ լինել կարծում։ Առանց ճշմարտութեան կառաւարդել նա չէ կարող և անկարելի է որ տեսնէ այն, ու առջևը գլուխ չխնայարհնցէ։

Սխալութիւն մարդկային է, իսկ ճշմարտութիւնն անմեղ է։ Պատրաստ է նա միշտ և միշտ թանկագին է, և պէտք է նաև անշուշտ նորանը լինի վերջը իրաւունքը։

Մարդիկ ճերմակում են, գրում ես գուշ մեր Տէր Քրիստոսին չճանաչուած ու արհամարհուած տեսնելով։ Թող լինի, դու բարի և արգար հոգի։ պատիւ են այն ճերմակ մաղբիւր, որ նորա համար են ճերմակել։

Թեպէտ նորա համար հարկաւոր չէ, որ քո մաղբիւր ճերմակին, նա կմայ անշուշտ ինչ որ

է։ Ովքեր ճշմարտութիւնը չեն ճանաչում և դորձ գնում, յիշուի վնաս են կրում զորանից, բայց ինչ կարող է ճշմարտութեամբ վնասել՝ արդեօք ճանաչուած և գործ է գրուած նա թէ ոչ։ Նա ոչ մէկի կարիք չունի և նորա բնութեան մեծութիւնից ու վսեմութիւնից է, որ պատրաստ կեցած է միշտ, ապերախութեան դէմ՝ չի յոգնում և ծագող արեգակի նման կռուում է ամպերի ու մառախուղի հետ՝ մաքելու և սկիզբներու համար նոցա։

Թող կռուէ, և սիրտը մի խորատկիր այն բանի համար, որ փոխել չես կարող։

Ով չի կամենում Քրիստոսին հաւատալ, պէտք է տեսնէ, թէ ինչպէս գլուխ կհանէ առանց նորան։ Ես և դու չենք կարող։ Մենք կարիք ունինք այնպիսի մէկի, որ մեզ բարձրացնէ և պահէ՝ մինչ կենդանի ենք, և ձեռքը մեր գլխի տակ դնէ, երբ կմեռնինք, և նա կարող է ամենապատուական կերպով, իսկ մէկ օրիշը չգիտենք, որի կողմից աւելի յոծարութեամբ ընդունենք այդ օգնութիւնը։

Բ. ԻՐ ՈՐԻ ԲՈՎԼԱՆԵՐՈՒՆ ԱՐԱՆ ԿՏՈՒԹ:

Կամոց կամոց մտնելում է ժամանակը, երբ ես պէտք է այն ճանապարհը դնամ, որից այլևս չեն վերադառնում։ Քեզ հետս վերցնել չեմ կարող և թողնում եմ այնպիսի մի աշխարհում, ուր բարի խորհուրդն աւելորդ չէ։

Ոչ որ իմաստուն չէ մար արդանդից սկսած, ժամանակն ու փորձառութիւնը ուսուցանում են մեզ և մարում են կալը։

Ես աւելի երկար միջոց եմ տեսել աշխարհը, քան դու։ Եսմէն ինչ ոսկի չէ, սիրելի՛ որդեակ, որ փայլում է, ես քիչ աստղեր չեմ տեսել երկնքից վայր ընկած, և քիչ գաւազաններ՝ որոնց վերայ յենուում էին, կտրած։— Գորա համար կամենում եմ մի քանի խորհուրդ քեզ տալ և քեզ ասել, թէ ինչ եմ նկատել, և ինչ է սովորեցրել ինձ ժամանակը։

Ոչինչ չկայ մեծ, որ բարի չէ, և ոչինչ ճշմարիտ՝ որ չի գիմանում։

Մարդս այստեղ իւր տանը չէ... Եսմէն ինչ անփութ է նորա հետ և նորա կողքին, նա թողած է ինքն իւր յուսով, և իւր ձեռին է իւր կեանքը։

Իսկ նորա համար միևնոյնը չէ՝ աջ է գնում արդեօք, թէ ձախ։

Մի խորուիր, իբր թէ նա ինքն իւր գլխի ճարը տեսնել և իւր ճանապարհը գտնել կարող է... Ափսոս համարի՛ր քեզ, չար գործելու համար։ Սիրտը թող անցաւոր բանի չկաշի։

Ճշմարտութիւնը չի յարմարում մեզ, սիրելի՛ որդեակ, մենք պէտք է նորան յարմարուինք։

Ինչ որ տեսնել կարող ես՝ տես և գործ գիր գործ համար աչքդ։ Իսկ ինչ անտեսանելիքն և յայտնականին է վերաբերում՝ Աստուծոյ խօսքով առաջնորդուիր...

Ախորժանք օտարեր ուրիշներից, և ուր խօսք է լինում՝ իմաստութեան, մարդկային երջանկութեան, լուսոյ ազատութեան առաքինութեան և ինչ մասին՝ ուշադրութեամբ ահանջ գիր։ Սակայն իսկոյն և անպատճառ մի հաւատա...

Ոչինչ մի սպասիր գործի վերջի և նոցա գործունէութիւնից, և ուր փողոցի վերայ աղմուկ են հանում հեռու դէպքեր։

Մէկը կամենում է քեզ իմաստութեան ուսուցանել՝ նորա երեսին նայիր։ Եթէ երեսակցում է իրեն՝ որչափ և զիտուն լինի ու անուանի թող ու ծանօթութեան կտրիր։ Ինչ որ չունի մարդ, չի կարող նաև ուրիշին տալ։ Եւ նա չէ աղատ ով կամենում է. այլ աղատ նա է, ով կամենայ կարող է, ինչ որ անել պարտական է...

Պաշտպանի ճշմարտութիւնը երբ կարող ես, և թող յօժարութեամբ, որ քեզ ատեն նորա համար, բայց իմացած եղիր, որ քեզ գործը ճշմարտութեան գործը չէ, և զգոյշ կաց, որ նոքա իրար չխտնուին, ապա թէ ոչ վարձդ ունայն կլինի։

Բարին արա առջեդ և մի հոգա թէ ի՞նչ կլինի դորանից։

Պամեցիր միայն մի տեսակ բան, և կամեցիր սրտով։

Հոգա մարմնովդ մասին, բայց ոչ այնպէս, իբր թէ հոգիդ լինէր...

Օտար բաների մէջ մի խառնուիր, բայց քո գործը քանակութեամբ կատարիր։

Ո՛չ քրի մի շողորդութիւն, և մի թող տուր որ քեզ շողորդութեան...

Զգոյշ եղիր որ և է աղջկայ թշնամանալուց, և մտածիր որ քո մայրն ևս մի աղջիկ է եղել։

Մի սաս ամէն բան, ինչ որ գիտես, բայց իմացիր միշտ ինչ որ ստում ես։

Մեծի հետ մի կապուիր...

Ո՛չ թէ բարեպաշտ ձևացողներին, այլ բարեպաշտներին, յարգիր և հետևիր նոցա։ Մի մարդ, որ ճշմարիտ Աստուծոյ երկիւզ ունի սրտում, արեգակի նման է, որ փայլում է և տարացնում, եթէ չի էլ խօսում։

Արա ինչ որ վարձի արժանի է, առանց վարձ ցանկանալու...

Երբ կանոնեմ՝ փակիր աչքերս և մի լար իմ վերայ։

Օգնիր մօրդ և պատուիր նորան, քանի կենդանի է. ապա թաղիր ինձ մօտ։

Նա ամէն օր մտածիր մահուան և կեանքի մասին՝ արդեօր կարող կլինի ուղիղ գտնել, և ուրախ սիրտ ունեցիր։ Մի հետացիր այս աշխարհից։

Տից, առանց քո սերն ու պատկառանքը դէպք բրիտանէութեան Հիմնադիրը որ և է բանով ցոյց տուած լինելու։

Անելացնում ենք մի հարուած եւս անգլիներէն «Մեծ մարեր» անունով գրուած քից, որ գտնում ենք նոյն Chr. Welt-ի 5-րդ համարում։

ԲԱՂԻՔ

Մարդիկ կան, որոնք շարունակ բազմից հոնից ման են դուրս և երբէք չեն գտնում։ Բազմը ստփորաբար ուղիղ ճանապարհով չի մօտենում։ Փութեանցով հետամուտ ես լինում քո պարտականութիւնը կատարելու և զարմացած ես մնում՝ աւելին գտնելով, քան որոնում էիր։ Բազմը չգտնելու ամենաապահով ճանապարհն է քո հետամտութեան նպատակակէտ դարձնել այն։ Հեշտ խուսափող մի բարիք է նա, որ քո ճանապարհի վերայ պատուում է, բայց մօտ չի թողնում։ Փորձիր ձեռքդ վրան դնել՝ և ահա յետ կցատկի, ինչպէս այն վայրի այժեամբ սարերի զլինին, Բազմ որոնելը նման է ծիածանի ծայրը որոնելուն. նա յետ յետ է փախչում, երբ մօտենում ես, և բռնել չես կարող։ Արքան և ծրագիրներ կազմես ու ետնդուն աշխատանք թափես բազմի համար՝ ստիպուած պիտ լինես ձեռք վերցնել նորան հետամուտ լինելուց և բաւականաւ պարտքի պարզ ու զփութարհոս ճանապարհը բռնելով, խղճիդ հաւատարմ ու Աստուծոյ կամքին հնազանդ լինելուն մէջ քո ուրախութիւնը գտնելով։ Պամենում ես իսկական բարիք ձեռք բերել՝ վարուիր ինչպէս նաւորդը, որ նախ ցուելը աւելի վեր է ուղղում, ճիշտ նպատակին հասնելու համար, Հետամուտ եղիր աւելի բարձր բանի, քան բազմաբնութիւնն է. բարձրը անշուշտ իւր մէջ նաև ցածրը կամփոխէ։

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՕՐԹՈՂՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ:

Վերջին ժամանակի ուստաց մի քանի աղգեցիկ թերթեր լուրջ ուշադրութեան արժանի դարձրին մօտիկ ապագայում Տիեզերական ժողով ունենալու խնդիրը։ Այսպէս Новое Время-ն առիթ առնելով Մոսկուայի մետրապօլիտ Սրբ. Վլադիմիրի մի հառում արտասանած խօսքերը, Օղի մէջ այժմ ակնդերական ժողով գումարելու ձգտումներ են տարաբնույթ, չափազանց կարեւոր մի երեւոյթ—գրում է։ Մի